

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պալլովկի գիւղի աղանդաւորների գործը. «Правит. Вѣст-
НИКЪ»-ում, փետր. 16-ին, տպուած էր հետեւեալ պաշտօնա-
կան հաղորդագրութիւնը.

«1901 թ. յուլիս ամսում բազմամարդ Պալլովկի գիւղում,
(Սումսկի գաւառ, Սարկովի նահանգ), որի բնակչութեան մի
մասը մօտ քսան տարի առաջ ուղղափառութիւնից (պրավո-
սլավութիւնից) անջատուել է, երեւաց այդ տեղում մինչև այդ
անյայտ աղքատ հազնուած մի մարդ, որ իրան անուանում էր
«Իսրայէլի մարգարէ Մովսէս»: Այդ մարդը, ինչպէս յետոյ ի-
մացուեց, Կիեվի նահանգի, Վասիլկովեան գաւառի, Եախնա գիւ-
ղի շինական Մոյսէյ Նաումով Տօղոսինկօն՝ «Մալեվանցը» ա-
ղանդի հետեւող էր և Պալլովկի գիւղում կարճ ժամանակ մնա-
լով կարողացաւ այդ գիւղի մի քանի բնակիչներին ծանօթա-
ցնել այդ աղանդի մօլար վարդապետութեան հետ:

«Ապա անցեալ տարուայ սեպտեմբերի սկզբում, Տօղո-
սինկօն երկրորդ անգամ եկաւ Պալլովկի գիւղը և, ժողովելով
տեղական աղանդաւորներին զրուցատրութեան, սկսեց նորից
քարոզել նրանց իր վարդապետութիւնը, ընդ սմին պատմելով
որ շուտով տեղի կ'ունենայ փոփոխութիւն գիւղացիական
կեանքի պայմաններում. չեն լինի ոչ եկեղեցիներ, ոչ հոգեւո-
րականութիւն, իսկ հողը հաւասար կը բաժանուի բոլոր մարդ-
կանց մէջ: Ներկայացնելով իրան իբրև գերբնական ոյժով օժտ-
ուած և արդարութեան յաղթանակին նպաստելու համար Սուրբ
Հոգուց կոչուած մի անձնաւորութիւն, Տօղոսինկօն, ի միջի
այլոց, համոզում էր աղանդաւորներին թէ Երկնային Արքայու-
թեան հասնելու համար անհրաժեշտ է ուղղափառ եկեղեցիներ-
ը քանդել, որպէս զի ազատել նրանց մէջ թաղնուած արդա-
րութիւնը:

«Պալլովկի գիւղի մինչև այդ խաղաղ աղանդաւորների
մէջ Տօղոսինկօյի քարոզը նկատելի յուզում առաջացրեց:

«Պալլովկի գիւղից նրա հռանալու օրից յետոյ առաջին
երկու օրուայ ընթացքում, սեպտեմբերի 14-ին և 15-ին, գիւ-
ղի փողոցներում չրջում էին աղանդաւորների խմբեր երգելով
և բացականչութիւններով. «Քրիստոս Յարեաւ: Բացի այդ,
նոյն օրերում գիշերները գիւղացի Տիմօֆէյ Նիկիտենկօյ տնում
տեղի էին ունենում աղանդաւորների բազմամարդ ժողովներ,
որոնց մէջ ղեկավարող և քարոզիչ էր հանդիսանում տեղացի
գիւղացի Գրիգորիյ Պալլենկօ: Այդ վերջինը, որ Պալլովկի գիւ-

դուժ Տօղօսինկոյի գտնուած ժամանակ մօտ ծանօթանալով նրա հետ, իւրացրել էր նրա մուլար վարդապետութիւնը, սկսեց աղանդաւորներին ուսուցանել, ասելով նրանց թէ մօտ է կորուստը, թէ չը պէտք է պահել ճշ ոսկի, ոչ արծաթ՝ և թէ իր՝ Պաւլինկոյի վրայ, որ ոյժ էր ստացել «Մովսէս մարգարէից» (Տօղօսինկոյից), իջել է Հոգին Սուրբը։ Աղանդաւորները յուզուածութիւնը ծայրայեղ լարուածութեան հասաւ, երբ սեպտեմբերի 16-ին, գիշերը, Նիկիտենկոյի տան մէջ եղած ժողովում, Գրիգորիյ Պաւլինկօն, կրկնելով իր ուսուցիչ Տօղօսինկոյի խօսքերը, յայտնեց, թէ ինքը, Պաւլինկօն, որ օժտուած է աստուածային զօրութեամբ, պէտք է եկեղեցում բաղձի սեղանի վրայ, որի տակ քահանաները թագցրել են արդարութիւնը, և թէ Պաւլովի գիւղում եղած երկու ուղղափառ եկեղեցիները պէտք է քանդուեն, անարդարութիւնը յաղթահարելու համար։ Միաժամանակ Գրիգորիյ Պաւլինկօն բացատրեց, թէ վերջին ժամերը հասնում են և թէ նրանք, որոնք ցանկանում են ընդունել Հոգին Սուրբը՝ թողհետեւ են իրան։ Այդ քարոզը լսելիս աղանդաւորներէից շատերը այնպիսի աքանչացած տրամադրութեան հասան, որ փողոց էին շարտում փող և Գրիգորիյ Պաւլինկոյի առաջ խոստովանում էին իրանց մեղքերը։

Սեպտեմբերի 16-ին, կիրակի օրը, առաւօտեան մօտ ժամի 6-ին, ամբողջ գիշերը Տիմօֆէյ Նիկիտենկոյի տանը անցկացրած աղանդաւորները խմբովին, աւելի քան 100 մարդ, ուղեկցուելով կանանցով և երեխաներով, դիմեցին ճանապարհին գտնուող մերձաւոր եկեղեցի-դպրոցին։ Ամբոխի առջևից սայլի վրայ գնում էր գիւղացի կին ելիզավետա Պաւլինկօն մանուկը ձեռքին և, բարձրացնելով նրան, բղաւում էր. «հաւատացէ՛ք այս մանուկ Յիսուսին, որ ծնուել է ոչ մարմնից»։ Այդ սայլի յետեւից գնում էին Գրիգորիյ Պաւլինկօ, նրա հայր Ավրաամ Պաւլինկօ և այլ աղանդաւորներ ձայնելով. «հաւատում ենք, Քրիստոս Յարեաւ, արդարութիւնը գալիս է»։

«Ի նկատի ունենալով արդէն տեղական պօլիցիային հասած լուրերը, որ Պաւլովի աղանդաւորները պատրաստուում են յարձակուել և քանդել ուղղափառ եկեղեցիները, Սումսկի գաւառի 2-րդ ստանի պրիստաւը կարգադրեց որ Տիմօֆէյ Նիկիտենկոյի տնից աւելի մօտ գտնուող եկեղեցի-դպրոցը, կիրակի օրը, սեպտեմբերի 16-ին, փակուած լինի և տեղական հոգեւորականութիւնից նշանակուած ժամասացութիւնը յետաձգուի։ Յիշուած եկեղեցին պահպանելու համար նրա չրջապատի մօտ նշանակուած էին տեղական պօլիցիական ուրեաղնիքի, մի քանի հարիւրապետներ (սօտսկի), տասնապետներ (դեսեատսկի) (

և քաղաքապահներ, որոնք ուղարկուած էին Պավլովկի գիւղը հարևան Բէլօպօր գիւղաքաղաքից: Իսկ ինքը ստանի պրիստաւը ներկայ էր նոյն օրը նոյն գիւղի միւս՝ Միքայէլ Հրեշտակապետի եկեղեցում, որ աւելի քան երկու վերստ հեռու է եկեղեցի-դպրոցից: Մօտենալով այս վերջինին, աղանդաւորները եկեղեցի-դպրոցի շրջապատից դէն հրեցին պօլիցիական պաշտօնեաներին, հարուածներ հասցրին նրանց, աղաղակով յարձակուեցին եկեղեցու դռների վրայ և, կոտորելով կողպէքը, ներս խուժեցին եկեղեցին, ուր կատարեցին անտանելի անկարգութիւններ միացրած սրբապղծութեան հետ: Կոտորուելով եկեղեցու պատուհանները և ապակիները, աղանդաւորները, որոնց պարագլուխ էին գիւղացի Գրիգօրիյ և Ավրաամ Պավլենկօ, Պետր Խարախօնով, Պետր, Անտօն, Իվան և Կօբըլչենկի, Մաքսիմ և Ստեփան Բերեստկի, Իվան Լիւբիչ և ուրիշները, յարձակուեցին սուրբ սեղանի վրայ: Գրիգօրիյ Պավլենկօն նստեց նրայ վրա, նրան հետեւեցին և ուրիշները: Դրանցից յետոյ սեղանը շուռ էր տուած և ջախջախուած, արքայական դռները փակուած էին, վարագոյրը պոկուած էր, սուրբ պատկերները իրանց շրջանակներից հանուած էին և գետին գցած, սեղանի և միւս խաչերը, մասուճի բաժակը, խաչվառները և այլ սրբազան իրերը մասամբ ծռացրուած էին, մասամբ կոտորուած: Բացի այդ, սուրբ աւետարանը պատռուած էր և գետին գցած, ինչպէս և սեղանի սրբազան ծածկոցը:

Եկեղեցի-դպրոցում կատարելով նկարագրած աւերմունքը և ծեծ տալով եկեղեցին մտած ուղղափառ հարիւրապետ Անտօն Ֆեդօրչենկօյին, աղանդաւորները՝ «մենք յաղթեցինք, արդարութիւնը դալիս է, Բրիստոս Յարեաւ, ուռած» ճիշերով դիմեցին գէպի Միքայէլ Հրեշտակապետի եկեղեցին: Տեղական քահանան, իմանալով աղանդաւորների մօտենալը, իսկոյն, պատարագի խորհուրդը վերջացնելուց յետոյ, դադարեցրեց ժամասացութիւնը, ժամաւորները դուրս եկան եկեղեցուց, կողպեցին նրա դռները և սկսեցին զանգահարել: Ստանի պրիստաւն էլ, ժողովելով իր տրամադրութեան տակ գտնուած հարիւրապետներին, տասնապետներին և քաղաքապահ ոստիկաններին, որոնց միացան մի քանի ուղղափառ գիւղացիներ, ընդ առաջ դիմեց աղանդաւորների ամբօխին և առաջարկեց նրանց՝ դադարեցնել անկարգութիւնները: Բայց նրա յորդորները անհետեւանք մնացին: Աղանդաւորները կատաղութեամբ յարձակուեցին պրիստաւի և նրան ուղեկցող մարդկանց վրայ, ծեծեցին նրանց և ապա, ներս խուժելով եկեղեցու ցանկապատից, սկսեցին փորձել ոյժով ներս մտնել եկեղեցին, բայց չը

կարողացան, որովհետև այդ ժամանակ Պալլովկի գիւղի ուղղափառ գիւղացիներից շատերը վրայ հասան և զինուելով փայտերով յարձակուեցին աղանդաւորների վրայ: Վերջիններս, չը նայած յամառ ընդդիմադրութեան, չը կարողացան յետ հրել ուղղափառներին և ստիպուած էին, ընդհանուր ծեծ ու կռուից, ցրուել: Ընդ սմին ուղղափառներից մի քանիսը ջարդուած էին, իսկ քսան ու երկու աղօթողները մեծ մասամբ թեթեւ էին պրծել, բացի աղանդաւոր Նակով Կովալենկօն, որ այնպէս սաստիկ ջարդ էր ստացել, որ միւս օրը մեռաւ:

Անմիջապէս անկարգութիւնները վերջացնելուց և բոլոր քնառուածներին բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ, Սուսկի չըջանային դատարանի ամենակարևոր գործերի դատաստանական քննիչը, նոյն դատարանի դատախազի անմիջական հսկողութեամբ, սկսեց կատարել նախնական քննութիւն նկարագրած անցքերի:

Նախնական քննութիւնը վերջացնելուց յետոյ, Խարկովի դատաստանական պալատի 1901 թ. դեկտ. 5-ի որոշմամբ 68 մեղադրեալներ, որոնց թւում և Մօյսէյ Տօքսիենկօ, դատի էին ենթարկուած մեղադրուելով. Տօքսիենկօ—սրբապղծութեան մէջ գրգռուում և Պալլովկի գիւղի բնակիչների մէջ յուզիչ լուրեր տարածելում. (յօդ. 13, 210 և 938 պատժ. կան.), իսկ բոլոր միւս մեղադրեալները—գործով սրբազան իրեր սրբապղծելու, Պալլովկի գիւղի ուղղափառ բնակիչների վրայ յարձակուելու և պօլիցիական պաշտօնականներին ընդդիմադրութիւն ցոյց տալու մէջ (յօդ. 13, 210, 269¹ և 27 պատժ. կան.):

Ապա այս գործը քննուած էր Խարկովի նահանգի Սուսկ քաղաքում, փակ դռներով, այս թուականի յունուարի 28-ից մինչև փետրուարի 4-ը Խարկովի դատաստանական պալատի առանձին ստեանի դատաստանական նիստում, դատակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ: Դատաստանական պալատի վճռով 66 մեղադրեալներից 17 հոգի արդարացրուած էին, իսկ մնացած 49 հոգին յանցաւոր էին ճանաչուած և դատապարտուած էին, 45 հոգի—կորոզութեան բոլոր իրաւունքներից զրկում և աքսորում տաժանակիր աշխատանքի: Մօյսէյ Տօքսիենկօ և Գրիգօրի Պալլենկօ 15 տարով, Ավրամ Պալլենկօ, Պետր Խարախօնով, Անտօն, Պետր և Իվան Կօրբլենկի և միւսները, թուով 37 մեղադրուածներ—12 տարով իւրաքանչիւրը, հինգ մեղադրուածներ 8 տարով և մէկը 4 տարով, 3-ը—բոլոր առանձին իրաւունքներից և արտօնութիւններից զրկուում և բանտարկութեան 8 ամսով իւրաքանչիւրը և, վերջապէս, մի անչափահաս մեղադրուած—բանտարկութեան 3 ամ-

սով, առանց իրաւունքների սահմանափակումների Միենոյն ժամանակ դատաստանական պալատը որոշեց տաժանակիր աշխատանքի դատապարտուած 80 մեղադրուածների նկատմամբ, քր. դատ. 775 յօդ. հիման վրայ, միջնորդել արդարադատութեան մինիստրի միջոցով Նորին Կայսերական Մեծութեան առաջ օրէնքով նշանակուած տաժանակիր աշխատանքը փոխարինել աքսորով ի բնակութիւնս:

Յոյցեր Ֆինլանդիայում. «Финляндская Газета»-ի մէջ տպուած է. «1901 թուի յունիսի 29-ի Բարձրագոյն մանիֆեստ Հելսինգֆօրսի լուտերական երկու եկեղեցիների փետրուարի 8-ին և 10-ին յայտարարուելու միջոցին եղած անցքերը յարուցեցին շատ զանազան հակասական խօսակցութիւններ: Այս բանը ի նկատի ունենալով խմբագրութիւնը գետեղում է ինչպէս բուն անցքերի, այնպէս և այդ անցքերը նախապատրաստող ազդեցիկայի յաջորդական նկարագիրը:

1901 թ. յունիսի 29-ի (յուլիսի 12-ի) Բարձրագոյն մանիֆեստով յայտարարուած էր Ֆինլանդական Մեծ Իշխանութեան համար Բարձրագոյն հաստատուած զինուորագրութեան վերաբերեալ նոր կանոնադրութեան հրատարակումը: Շուտով սրանից յետոյ սկսեցին Հելսինգֆօրս քաղաքը հաւաքուել 1899 թուի արտակարգ սէյմի շատ պատգամաւորներ և իրանց քաղաքական գործունէութեամբ յայտնի այլ անձեր:

Մի քանի մասնաւոր ժողովներից յետոյ, որ տեղի էին ունենում գլխաւորապէս քաղաքական յայտնի գործիչ Մեխելի-նի բնակարանում, բոլոր վերոյիշեալ անձերը և ուրիշ շատերը օգոստոսի 4-ին (17-ին) հաւաքուեցին Տուրհօլմ կղզում (Հելսինգֆօրսի մօտ), որտեղ և մշակեցին պատտօններին ուղղելիք մի կոչ, որով դիմում էին ժողովրդի հոգևոր հովիւներին, որ յիշեալ Բարձրագոյն հրամանին չը հնազանդուելով՝ անձնական օրինակով նոյնը անել տային իրանց ծուխերին և ամենին չը յայտարարէին եկեղեցու բնմից, ինչպէս այդ պահանջուում է օրէնքով, Բարձրագոյն հրամանը զինուորագրութեան մասին, «որպէս զի դրանով նոր որոշմանը» *) օրէնքի նշոյլ անգամ չը տան:

*) Եկեղեցիներում յայտարարումը կատարում է մասամբ ընդունուած սովորութեամբ և կամովին Առաջին կարգի յայտարարումներին վերաբերում են այն որոշումները, որոնք գետեղուած են լինում ճորշումների ժողովածուի մէջ պայտարարել եկեղեցիներում մակաղրութեամբ. սակայն սոյն ժողովածուի մէջ գետեղուած շատ որոշումներ այդպիսի մա-

Այս կոչից յետոյ, ազգաբնակչութեան մէջ սկսեց տարածուել մի ուրիշը հետեւեալ վերնագրով՝ «Ինչպէս պէտք է վարուել զինուորագրութեան գործում», ստորագրուած Սէյմի մի քանի պատգամաւորներ» խօսքերով:

Այս վերջին կոչի մէջ, որը ուղղուած էր պատուաւոր քաղաքացիներին, յանձնարարուում է ծխականներին պատգամաւորութիւնների միջոցով դիմել պատուորներին, խնդրելով որ չը յայտարարեն Բարձրագոյն մանիֆեստը, իսկ եթէ պատուորները վճռական պատասխան չը տան, այն ժամանակ՝ եկեղեցում, միահամուռ բողոք յայտնել հէնց որ պատուորը կը սկսի ընթերցումը, և նոյն իսկ ամենաեղանակուն միջոցներով առաջ կանգ չառնել նիստն ընդհատելու համար, որից յետոյ անյապաղ դուրս գալ եկեղեցուց:

Բացի այս կոչերից, երկրիս մէջ երեւան եկան ռահագին քանակութեամբ բրօշլուրներ ու թերթիկներ, նշանագրուած զըլխաւորապէս Ստակահօլմում և Շտետինում, որոնց մէջ ժողովրդին զինուորագրութեան նոր կանոնագրութիւնը ներկայացնում էր ամենախեղաթիւրուած ձևով: Հետեւելով վերոյիշեալ կոչերում նշանակուած ծրագրին, պատուորները շատ տեղերում, ինչպէս յայտնի է, հրաժարուեցին Բարձրագոյն մանիֆեստը յայտարարելուց, — մի քանիսը խնդրամատուց լինելով Ֆինլանդական Կայսերական սենատին իրանց ազատել այդ պարտականութիւնից, իսկ միւսները տալով շատ խիստ կարծիքներ, որոնց մէջ յայտարարում էին, թէ «չեն կարող Բարձրագոյն մանիֆեստին օրէնքի ոյժ և նշանակութիւն տալ», ուստի և ընտրելով իրենց պարտականութեան, նաև չեն կարող այդ մանիֆեստը յայտարարել ժողովրդին իբրև օրէնք, առանց որ դրանով խախտած լինեն իրաւունքը և դրժած իրանց տուած երդումը»: Սակայն, Ֆինլանդական Կայսերական սենատը մերժեց պատուորների բոլոր խնդիրները և կոնսիստորիաներին պատուիրեց ձեռք առնել հարկաւոր միջոցները շուտաւիտ յայտարարելու նոր օրէնքը:

Այն ժամանակից, որ հարկաւոր էր ամբողջ Ֆինլանդիայում ցրելու զինուորագրութեան վերաբերեալ Բարձրագոյն մանիֆեստը պարունակող Ուրոշումների ժողովածուն, և յիշեալ Ուրոշումների ժողովածուն պատշաճաւոր պատուորական վարչութիւններին յանձնել գործը մի քանի մադիստրատների կողմից ուղարկուելուց, — ընդ սմին Նիւստադի մագիստրատը մինչև

կագրութիւն չունեն, բայց առաջիկաների հետ միասին օրէնքի ոյժ են տաւում:

անգամ ամենևին չէր յանձնել այն, հիմնուելով այն բանի վրայ, թէ ճնոր կանոնադրութիւնը չի կարող ֆինլանդիայում օրէնքի ոյժ ունենալ, այս բոլորից եռանդով օգտուեց յանցապարտ ազգիտացիան, դիմադրութեան նախապատրաստելով ազդեցիկ ինտելիգէնցիային, իսկ մի քանի սակաւաթիւ համայնքներում— նաև ժողովրդին:

Բարձրագոյն մանիֆեստի ընթերցման սկզբում եկեղեցիներից ոմանց մէջ մի քանի անհատներ, զլիաւորապէս ինտելիգէնտներէր, դիմում էին պատորին, յայտարարելով իբր թէ ծխականների կողմից, այդ կարգաւ հիմնական օրէնքների կարգով չը կազմուած դոկումենտներ, ուրիշ եկեղեցիների մէջ ընդհատում էին ընթերցումն երգելով՝ «Տէրն մեր հօր պաշտպան» սաղմոսը կամ թէ աղմկալի կերպով դուրս էին գալիս եկեղեցուց:

Իսկ Սիբբոյի եկեղեցում (Նիւլանդի նահանգ) մի քանի ինտելիգէնտ անձեր թոյլ էին տուել իրանց բռնութեամբ հեռացնելու Բարձրագոյն մանիֆեստը լսել ցանկացողներին, իսկ պատորի եկեղեցուց դուրս գալու միջոցին խլել նրա ձեռքից դոկումենտները, բոթել և հարուածներ հասցնել:

Պատտօրներից յիշեալ պահանջներն անող և ժամաւորներին սաղմոս երգել հրաւիրողները (սաղմոս, որ, ինչպէս պահանջուած է Եկեղեցական կանոնադրութեան § 24-ով, չէր նշանակել պատտօրն այդ օրը) դատական պատասխանատուութեան էին կանչուել, բայց տեղական դատարաններից արդարացրուած էին:

Չը նայելով սենատի և եպիսկոպոսների կտրական պատուէրից, պատտօրներից ոմանք այնուամենայնիւ չը կարդացին Բարձրագոյն մանիֆեստը զինուորագրութեան մասին, ուստի և պատշաճ պատասխանատուութեան ենթարկուեցին. իսկ եկեղեցական բեմերից նոր օրէնքը յայտարարելու համար նրանց տեղ ուղարկուեցին ծուխ չունեցող պատտօրներ, որոնցից պատտօր Սալմէ սկսեց կարդալ Բարձրագոյն մանիֆեստը Հելսինգֆօրսի եկեղեցիներում— փետրուարի 3-ին (16-ին) Նիկոլայեան և 10-ին (23-ին) Նոր եկեղեցում:

Հէնց որ յիշեալ պատտօրն սկսեց կարդալ Բարձրագոյն մանիֆեստը Նիկոլայեան եկեղեցում, իսկոյն ևեթ նրա մօտ հաւաքուեցին մի խումբ անձեր, առաջնորդութեամբ «Päivälehti» լրագրի նախկին խմբագիր Էրօ Էրկկոյի, որը յայտնեց թէ՛ «Ֆին ժողովրդի կողմից մենք խնդրում ենք ձեզ դադարեցնել զինուորագրութեան վերաբերեալ որոշման ընթերցումն և իջնել բեմից»։ Ընդ սմին շուրջը լսուեցին ձայներ. «Մենք միանում ենք»:

Սրանից յետոյ սկսեցին երգել՝ «Տէրն մեր հզօր պաշտպան» սաղմոսը, ուստի պատուին ստիպուած էր դադարեցնել ընթերցումը:

Յոյցին մասնակցողներին ոստիկանական կոմիտարը հրաւիրեց թաղային ոստիկանատուն՝ արձանագրութիւն կազմելու համար. սկզբում նրանք ուզում էին խոյս տալ կոմիտարի պահանջը կատարելուց, բայց երբ մի քանի կոնստաբլներ մօտեցան՝ հնազանդուեցին:

Հարցուփորձի ժամանակ բոլոր ձերբակալուածները, որոնց թւում կար ի միջի այլոց, վերջերս սենատի որոշմամբ պաշտօնից հեռացրած*) շուեգական տարրական լիցէնի ռեկտօր ֆօն-Բօնսդօրֆ, որը այժմ նոյն տեղում ուսուցիչ է, փասաաբաններ, փոխ-հերադահնգինգներ ֆօն-Հարտման և Էմիլ Վալլին և ուրիշները—ուզում էին պատասխանել ամենքը միաժամանակ, իսկ միւս սենեակը հեռացուածները փորձեցին փախչել, բայց բռնուեցին:

Արձանագրութիւնը կազմուելուց յետոյ ձերբակալուածներն ազատ արձակուեցին:

Հետեւել կիրակի, փետրուարի 10 (28-ին), ժամատացութիւնը վերջանալուց յետոյ, երբ պատուր խալմէն Նոր եկեղեցում սկսեց կարգալ Բարձրագոյն մանիֆեստը, նրան ընդհատեց վերոյիշեալ պ. ֆօն-Բօնսդօրֆը բարձրաձայն կանչելով. «Պատուրին պատշաճ չէ կարգալ զինուորագրութեան վերաբերեալ որոշումը, որովհետև այդ որոշումն ապօրինի է և երևան է եկել ապօրինի ճանապարհով, և մենք բողոքում ենք ընթերցման դէմ»:

Սրանից յետոյ դօկտօր Իօհան Վիլհէլմ Միլլիակուս և ուրիշները, որոնք շրջապատում էին պ. ֆօն-Բօնսդօրֆին, նմանապէս և շատ ծխականներ աղաղակում էին՝ «Այդպիսի բան չի կարելի կարգալ»—և իսկոյն սկսեցին երգել՝ «Տէրն մեր հզօր պաշտպան» սաղմոսը. այս երգեցողութիւնը միայնակ եկեղեցում բոլոր գտնուածները, որով և պատուր խալմէն ստիպեցին դադարեցնել Բարձրագոյն մանիֆեստի ընթերցումը:

Եկեղեցուց դուրս գալիս, նախազաւթում, անկարգութեանը մասնակցող անձերին ոստիկանութիւնը հրաւիրեց թաղային ոստիկանատուն արձանագրութիւն կազմելու համար: Ձր նայելով ոստիկանութեան յաճախակի խնդրանքներին ջրուել, ահագին ամբոխը հետեւում էր բռնուածներին մինչև թաղային ոստի-

*) Իր իրաւասութեան տակ գտնուած դպրոցում ռուսաց լեզուի դասատուութեան գործին անհամապատասխան վերաբերուելուն համար:

կանատուն, որի առաջ և մնաց սպասելու լցնելով մերձակայ փողոցները:

Ամեն անգամ, երբ ոստիկանները խնամախոսաբար ամբողջին հրաւիրում էր, որ ցրուի, ամբոխը պատասխանում էր ազադակելով՝ «ուռա», ուստի կանչուեցին հեծեալ պոլիցիականները, որոնք և ցրեցին ամբոխը, որի ժամանակ մի քանի դիմադրողներ բռնուեցին:

Արձանագրութիւն կազմելու համար ոստիկանատուն հրաւիրուածները թուում կային պաշտօնից արձակուած*) Նիւլանդի նահանգական վարչութեան փոխ-լանդսկամերիք Վերներ Հոլմբերգ, նախկին ռեկտոր ֆոն Բոնսդորֆ, փիլիսոփայութեան մագիստրոսներ Հուգօ Վիլհէլմ Բլումկլիստ և Հայնրիխ Ստոլ, սենատի արձանագրութիւնները կազմող քարտուղար էլմի Ֆուրուհելմ, որը թոյլ էր տուել իրան ձեռնափայտով խփելու ոստիկանական կոմիսարին, մի քանի հոգի ուսանող երիտասարդութիւնից և այլք:

Այս գործին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները յանձնուած են քաղաքային ֆիսկալին՝ մեղաւորներին դատական պատասխանատուութեան ենթարկելու համար:

«KABEAST», լրագրում կարդում ենք. «Բաթումից ստացուած տեղեկութիւններով, մարդի 4-ին Ռոտշիլդի գործարանի բանուորները դադարեցրին աշխատանքը՝ մերժումն ստանալով այնպիսի պահանջների կատարման մէջ, որոնք ոչ մի օրինաւոր հիմք չունէին. այս պատճառով էլ գործարանը փակուեց: Ապա, մարտի 8-ին, այդ գործարանի բանուորներից բաղկացած մի խումբ, — մօտ 300 հոգի, — հաւաքուեց Բաթումի ոստիկանական վարչատան առաջ և պահանջեց արձակել նախընթաց օրը ձերբակալուած բանուորներին, որոնք գործարանում աշխատանքները դադարեցնելու նախաձեռնողներն էին: Տեղական ոստիկանութեան առաջից՝ բանուորները պատասխանեցին մերժումով, ուստի և ձերբակալուելով ուղարկուեցին բանտ: Հետեւեալ օրը, մարտի 8-ին, հաւաքուած փողոցային ամբոխը փորձ արեց ազատելու կալանաւորուածներին բանտից, և, ականջ չը դնելով համոզումներին, յարձակուեց տեղական զօրքի բօտայի վրայ, որ զանուում էր այնտեղ՝ անկարգութիւնների առաջ առնելու համար: Ռօտայի վրայ, ամբոխի կողմից տեղաց քարերի մի ամ-

*) Նիւլանդի նահանգապետին պարզապէս դիմադրելու և նրա հետ յանդգնաբար վարուելու համար:

բողջ տարալի. դրա հետ միասին արձակուեցին զնդակներս: Անհրաժեշտ հարկից առիպուած՝ բօտան պատասխանեց հրացան արձակելով ամբոխի վրայ: Բօտայի զինուորներեց վերաւորուած է մի հոգի, իսկ ամբոխից սպանուած են 13 հոգի:



Կիսվի պոլիսելսնիկուսի փակումը. «Правт. Вѣст.»-ում տպուած է. «Անցեալ յունուարի 16-ին Ֆինանսների մինիստրը համաձայն պ. պ. մինիստրների յունուարի 10-ի խորհրդակցութեան որոշման, առաջարկեց Կայսր Ալէքսանդր II-ի Կիսվի պոլիսելսնիկական ինստիտուտի խորհրդին յայտնել ուսանողներին, որ եթէ անկարգութիւնների առաջն առնելու կամ դադարեցնելու համար անհրաժեշտ համարուի ժամանակաւորապէս փակել ինստիտուտը, ուսումնարանական զբաղմունքների և քննութիւնների համար լորած ժամանակը կը փոխարինուի ամառուայ մօտակայ արձակուրդների հաշուին. իսկ ուսումնարանական զբաղմունքները ընդհանուր առմամբ դադարեցնելու դէպքում մինչև երեք շաբաթ, քննութիւնները ամենեւին չեն կատարուի և II ու բարձր կուրսերի ուսանողները կը թողնուեն հետեւեալ տարին նոյն կուրսերում, իսկ առաջին կուրսի ուսանողները կ'արձակուեն և նորից կ'ընդունուեն՝ նորից մտնող ուսանողների ընդունելութեան ընդհանուր կանոնները ճիշտ պահպանելով միայն:

Ապա Ֆինանսների մինիստրը, իրանից կախուած բոլոր միջոցներով աշխատելով ուսանողների համար պոլիսելսնիկումը փակելու աննպաստ հետեւանքների առաջն առնել, յունուարի 26-ից առաջարկեց ինստիտուտի դիրեկտորին յայտնել ուսանողներին, որ նրանց բարիքը ցանկանալով և թանգ դնահատելով դպրոցական հաստատութեան վարկը, որի հիմնադրութեան և բարգաւաճման համար կառավարութիւնը այնքան ջանքեր է գործ դրել, նա, մինիստրը, հրաւիրում է նրանց ինստիտուտի արժանապատուութեան համապատասխան խոհեմ ընթացք ունենալ, և որ նրա և պրօֆէսորների համար շատ ցաւալի և վիրաւորական կը լինի, եթէ ուսանողները մասնակցեն անկարգութիւններին: Մի և նոյն ժամանակ, լիակատար վստահութիւն յայտնելով դիրեկտորին և պրօֆէսորների ամբողջ կազմին, մինիստրը խնդրում էր ինստիտուտի իշխանութիւնից ազդել երիտասարդութեան վրայ և նախազգուշացնել նրան, որ անկարգութիւնների դէպքում նա հարկադրուած կը լինի պ.պ. մինիստրների խորհրդակցութեան մատնացոյց արած միջոցը գործադրել:

Փետրուարի 12-ին, զեկուցումն ստանալով այն մասին,

որ պարապմունքը ինստիտուտում չեն վերսկսուել երեք շաբթուայ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, ֆինանսների մինիստրը կրկին անգամ հետազրեց ինստիտուտի դիրեկտորին, խընդրելով նրան համոզել ուսանողներին անյապաղ սկսել պարապմունքները և մատացոյց անել նրանց, որ ինստիտուտը իր հիմնուելու օրից եղել է առանձնապէս նպաստաւոր պայմաններում, և որ ուսանողները ոչինչ առիթներ չունեն դժգոհ լինելու ոչ իրանց դպրոցի ներքին կեանքից, ոչ պրոֆէսորների և ոչ էլ իր, մինիստրի, վերաբերմունքից դէպի նրանց:

Այդ յորդորները անողութիւն չունեցան և ինստիտուտը փակելու մասին յայտարարուած միջոցը փետրուարի երկրորդ կէսից պէտք է գործադրուէր իր բոլոր հետեւանքներով, բայց, ի նկատի ունենալով ինստիտուտի խորհրդի առանձին միջնորդութիւնը, որը յոյս էր յայտնում, թէ ուսանողները կը սկսեն դասալստութիւնները լսել Մեծ պատի առաջին շաբաթը անցնելուց յետոյ, որի ժամանակ կիսվի բոլոր դպրոցներում պարապմունքներ չեն լինում, ֆինանսների մինիստրը, ժողովրդական լուստւորութեան մինիստրի համաձայնութեամբ, հնարաւոր համարեց պարապմունքները սկսելու վերջնական ժամանակամիջոցը նշանակել մարտի 5-ը:

Այժմ ստացուած տեղեկութիւնների հիման վրայ, պարապմունքները կիսվի պօլիտեխնիկական ինստիտուտում մարտի 5-ին չը վերսկսուեցին, և այդ պատճառով ֆինանսների մինիստրը կարգադրեց փակել ինստիտուտը մինչև ուսումնական տարուայ վերջը. II և բարձր կուրսերի ուսանողներին թողնել հետեւեալ ակադէմիական տարում մի և նոյն կուրսերում, ուր նրանք գտնուում էին այդ տարի. իսկ առաջին կուրսի ուսանողներին արձակել՝ իրաւունք տալով ինստիտուտին թոյլ տալ մրցական ըննութիւններ բռնել, նոր մտնողների հետ հաւասարապէս, դրանցից այնպիսիներին, որոնց յետ ընդունելը ինստիտուտի իշխանութիւնը հնարաւոր կը համարէ:

Ի պատիւ կիսվի պօլիտեխնիկական ինստիտուտի պէտք է ասել որ պարապմունքները դադարեցնելու ամբողջ ժամանակը նրանք կարող չը խանդարեցին՝ դպրոցի պատերում և պատշաճաւոր յարգանքով էին վերաբերում պրոֆէսորներին, որոնք իրանց կողմից ամեն միջոցներ գործ էին դնում բարեւար ազդեցութիւն գործելու համար ուսանող երիտասարդութեան վրայ: Ուսուցչիներ և ուսանողների այդպիսի փոխադարձ յարաբերութիւնների ժամանակ և աչքի առաջ ունենալով իշխանութեան կատարեալ հոգածութիւնը նրանց մասին, պարապմունքները դադարեցնելու ներքին ոչինչ պատճառներ չը

կային: Այդ պատճառները պէտք է դրսից ներշնչուած համարել:

Որոշելով ժամանակաւորապէս փակել ինստիտուտը, ֆինանսների մինիստրը նկատում է, թէ բարձրագոյն դպրոցը պարտաւոր է բացառապէս ուսումնական նպատակներին հետամուտ լինել, այսինքն հաղորդել իր սաներին գիտնական տեղեկութիւններ և ամեն միջոցները տալ այդ տեղեկութիւնները լրակատար կերպով իւրացնելու համար: Այդ նպատակներին չէր կարելի հասնել վերջացող ուսումնական տարում, պարապմունքների երկարատեւ ընդհատման և ուսանող երիտասարդութեան անհանգիստ դրութեան պատճառով, և մինիստրը իրան համար իրաւունք չէ համարում թոյլ տալ դուրս թողնելու ինստիտուտից այնպիսի անձանց, որոնք իրանց գիտութեամբ անարժան են ինժեներների կոչումը կրելու:

Որին կերպով ցաւելով, որ աւագների յորդորները, որոնք երիտասարդութեանը բարիք և օգուտն էին ցանկանում միայն, իրանց նպատակին չը հասան, մինիստրը յոյս ունի, որ ապագայում ինստիտուտի փակումը, որի պատճառը իրանք ուսանողները են եղել, կը զգուշացնէ ամենից շատ ոգեւորող երիտասարդներին այն ընթացքից, որ առաջ է բերում այդքան ոչ ցանկալի գործադրութիւնը:

Փետ. 9-ին Մոսկուայում եղած անկադրութիւններ. «Пра-вительственный Вѣстникъ»-ում տպուած է.

«Կայսրութեան բարձրագոյն դպրոցների մի մասի մէջ վերջին տարիներս տեղի ունեցող յուզմունքները անցեալ 1901 թուի վերջում ընդունեցին ակնյայտի հակակառավարչական բնուորութիւն: Չը բաւականանալով, առաջուան նման, ակադէմիական կադմի փոփոխութեան զանազան պահանջներ անելով, ուսանողական շարժումների ղեկավարները դպրոցների պատերի մէջ չը թոյլատրուած ժողովներում թէ իրանց ռասած ճառերով և թէ բազմաթիւ գաղտնի կոչերով ու պրօկլամացիաներով աշխատում էին գրաւել ուսանող երիտասարդութիւնը դէպի քաղաքական շարժման ճանապարհը, աշկարայ յայտարարելով գոյութիւն ունեցող վարչութեան ձեւը փոփոխելու անհրաժեշտութեան մասին: Մի և նոյն ժամանակ խոստովանելով ուսանող երիտասարդութեան անզօրութիւնը այդպիսի ձգտումները անմիջապէս իրագործելու համար, այդ շարժման ղեկավարները, սերտ յարաբերութիւններ պահպանելով գոյութիւն ունեցող յեղափոխական խմբերի և չրջանների հետ, շարունակում էին նոյն ոգով յանդաւոր պրօպագանդան հասարակութեան եւ մեծ քաղաքների

բանուորների միջև թէ բերանացի և թէ տարածելով յանցաւոր հրատարակութիւններու իրանց ձգտումներն արտայայտելու մերձագոյն եղանակներէից մէկը ազիտատօրները համարուած էին փողոցային ցոյցերի կազմելը, որի համար և փորձեր են արուած զանազան քաղաքներու Նոյնպիսի ցոյց կազմելու համար Մոսկուայում ընտրուած էր ներկայ տարուայ փետրուարի 9-ը։ Տեղական իշխանութիւնների կարգադրութեամբ, որոնք տեղեկութիւններ էին ստացել այդ բանի մասին, կալանաւորուեցին մինչև մասնացոյց արուած օրը ենթադրուած ցոյց կազմակերպողներ ի ամենաեռանդուն դրդիչները և նրա հնարաւոր ղեկավարները, թուով 47, որոնք մշակել էին ի միջի այլոց և նրա մանրամասն ծրագիրը գաղտնի ժողովներից մէկի մէջ։ Այդ միջոցը, որ անկասկած ազդեցութիւն ունեցաւ յետոյ տեղի ունեցած անկարգութիւնների վրայ, սակայն կատարելապէս նրանց առաջն առնելու համար ոյժը անբաւարար եղաւ, որովհետեւ փետրուարի 9-ին Մոսկուայի համալսարանում, որը ենթադրուելիք ցոյցերի համար վերջնակէտ էր ընդունուած, տեղի ունեցաւ այն անցքը, որ պատմուած է ժողովրդական լուսաւորութեան միւսիստրի հրամանի մէջ 1902 թուի փետրուարի 14-ին, № 1-ում։ Այդ կոչից յետոյ ներկայ տարուայ փետրուարի 15-ից Մոսկուայի տեխնիական դպրոցի ուսանողների մի խումբ, որ իրան սեփականացրել էր այդ դպրոցի շքերասային մասնաժողովի ամենը, դիմեց հրաւերով բողոք յայտնել ըստ ցանկացողներին գալ փետրուարի 17-ին, ցերեկուայ մօտ 2 ժամին դէպի Պուշկինի արձանը փողոցային ցոյցեր կազմելու համար։ Նշանակուած օրը մասնացոյց արուած տեղը հաւաքուեցին այդ դպրոցի մի քանի ուսանողներ եւ, խումբ կազմելով, սկսեցին խորհրդակցել ընթացքը սկսելու համար։ Դէպի Նիկիտսկայա Վօրօտա փողոցը առանց ըստուարով ցոյցեր անելով անցնելու հէնց առաջին փորձերի ժամանակ նրանց իսկոյն և եթ շրջապատեց ոստիկանութիւնը։ Բռնուեցին նրանցից 11 մարդիկ, որոնց մօտ գտնուեց դրօշակ յանցաւոր մակագրութեամբ։

Անկարգութիւններին մասնակցածների մեղաւորութեան հարցը ըննելիս ի նկատի առնուեցան ինչպէս նկարագրուած դէպքերի ընտրութիւնը, այնպէս էլ անհրաժեշտութիւնը դնելու գլխաւոր յանցաւորներին, որպէս զի նրանք այլ ևս չը շարունակեն ազդեցութիւն ունենալ շրջապատող շրջանների վրայ, այնպիսի պայմանների մէջ, որոնք աւելի քիչ նպաստաւոր լինէին յեղափոխական գործունէութիւն ցոյց տալու համար և այս պատճառով ըստ մեղաւորներին ենթադրուած էր ընտկեցնել պօլիցիայի հակադրութեան առկա կայսրութեան զանազան հետաւոր

տեղերում շատ թէ քիչ ժամանակով: Այս ենթադրութիւնը Բարձրագոյն գիտութեան հասցնելուց յետոյ, Թագաւոր Կայսրը բարեհաճեց Ամենաողորմածաբար հրամայել պահպանել Իրկուտակի ընդհանուր նահանգապետութեան սահմանները ուղարկելու միջոցը՝ միայն գլխաւոր մեղաւորներէ վերաբերմամբ, իսկ միւս մասնակիցներին ենթարկել բանտարկութեան 3-ից մինչեւ 6 ամիս ժամանակով:

Համաձայն այս բոլորի, ներքին գործերի մինիստրը մարտի 7-ին հաստատեց այն առանձին խորհրդակցութեան արձանագրութիւնը, որ կազմուած էր պետական պաշտպանութեան կանոնադրութեան 34 յօդուածի հիման վրայ և որ ընկել էր Մոսկուայում փետրուարի 9-ին և 17-ին ունեցած անկարգութիւններին 682 մասնակցողների գործը. այդ որոշմամբ այն մարդիկ, թուով 95 հոգի, որոնք յայտնի կերպով երևան են եկած քաղաքական անբարեյոլաւութեան մէջ, ցոյցերը պատրաստելու և նրա մէջ գիտակցաբար մասնակցելու մէջ, ուղարկւում են Իրկուտակի ընդհանուր նահանգապետութեան սահմանները պոլիցիայի հսկողութեան տակ ապրելու 2-ից մինչեւ 5 տարի ժամանակով. 567 հոգի ենթարկւում են բանտարկութեան 3—6 ամիս ժամանակով և 6 հոգի ենթարկւում են պոլիցիայի հսկողութեան 1 տարի ժամանակով այն տեղերում, ուր ապրում են նրանց ծնողները կամ ազգականները. 14 անձերի վերաբերմամբ գործը դադարեցրած է:

Այդ անձինք ըստ գաղութական հիմնարկութիւնների բաժանւում են այսպէս. Մոսկուայի համալսարանի ուսանողներ 537, Մոսկուայի տեխնիկական ուսումնարանի—32, Մոսկուայի Գիւղատնտեսական ինստիտուտի—13, Մոսկուայի ինժեներական ուսումնարանի—3, Լազարեան ճեմարանի ուսանողներ—1, սահմանաչափական ինստիտուտի ուսանողներ—7, զանազան կուրսերի ունկնդիր կանայք—55, ուրիշ զանազան մարդիկ, այդ թէ կին—34:

Բանտարկութեան պատիժը կրելու գլխաւոր տեղը նշանակւած է Արխանգելսկի ժամանակաւոր բանտը:

Պատգոհական կարգադրութիւն հայ փախստականների վերաբերմամբ. Հայ-փախստականների վերաբերմամբ եղած Բարձրագոյն հրամանի հիման վրայ Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը առաջարկել է Թիֆլիսի ոստիկանապետին և գաւառապետներին.

1) Մարտի 12-ին կանչել բոլոր հայ փախստականներին ոստիկանական վարչատնները:

2) Յուշակագրել նրանց ու առաջարկել, որ կամ ոռոսահայատակութիւն ընդունեն կամ վերադառնան Թիւրքիա, որի համար տալ նրանց երկու շաբաթ ժամանակ:

3) Մինչև մարտի 26-ը կազմել այն բոլոր հայ փախստականներին ցուցակները, որոնք կը ցանկան Ռուսաստանի հայատակ դառնալ:

4) Ապրիլի 2-ին երդուեցնել այն բոլոր փախստականներին, որոնք ցանկութիւն կը լինեն յայտնած ոռոսահայատակութիւն ընդունելու. Թիֆլիսում նրանք պիտի երդուեցնուեն Վանքի աւագ եկեղեցում:

5) Մինչև յուլիսի 1-ը բոլոր փախստականներին իրաւունք է տրուած անդամ գրուելու այն հարկատու հասարակութեանը, որ կը ցանկանան իրանք. քաղաքային հասարակութիւնների անդամ գրուելը կատարուած է իշխանութեան միջոցով, իսկ գիւղական հասարակութիւնների անդամ գրուելիս անհրաժեշտ է նոյն այդ գիւղական հասարակութիւնների համաձայնութիւնը:

6) Այն փախստականներին, որոնք ցանկութիւն կը յայտնեն բնակութիւն հաստատել Ռուսիայի ներքին նահանգներում, իրաւունք կը տրուի ձրիաբար ուղևորուելու իրանց նոր բնակավայրերը:

7) Մարտի 26-ից սկսած բոլոր փախստականները կը մտցունեն առանձին ցուցակներ (ընտանեկան) և այդ ցուցակների կտրոնները կը յանձնուեն նրանց ձեռքը:

Հարկատու հասարակութիւններին նոր անդամ գրուած հայ փախստականները կ'ենթարկուեն ընդհանուր կանոնների և 1902 թուականից նրանցից ևս զինուոր կ'առնուի ընդհանուր հիմունքներով: